# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐՈՎ ԳՆՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեն, որը գտնվում է ք.Երևան, Մ.Խորենացու-3 հասցեում, ստորև ներկայացնում է ՊԵԿ-ՇՀԱՊՁԲ-13-1-11/21 ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգի արդյունքում 2013թ-ի դեկտեմբերի 23-ին կնքված ՊԵԿ-ՇՀԱՊՁԲ-13-1-11/21-1 պայմանագրում 2014թ-ի փետրվարի 17-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառը: Պայմանագրով սահմանվել է, որ դրանով նախատեսված ապրանքը մատակարարվում է այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա:

Փոփոխության նկարագրություն: Պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման նպատակով 17.02.2014թ. կնքվել է համաձայնագիր: Միաժամանակ Պայմանագրի թիվ-1 հավելվածով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետը սահմանվել է՝ 1-ին խմբաքանակ՝ 15 հատ – մինչև 2014թ. մարտի 25-ը, 2-րդ խմբաքանակ՝ 15 հատ – մինչև 2014թ. ապրիլի 20-ը, 3-րդ խմբաքանակ՝ 15 հատ – մինչև 2014թ. մայիսի 20-ը, 4-րդ խմբաքանակ՝ 15 հատ – մինչև 2014թ. հունիսի 20-ը, 5-րդ խմբաքանակ՝ 15 հատ – մինչև 2014թ. հուլիսի 20-ը, 6-րդ խմբաքանակ՝ 15 հատ – մինչև 2014թ. օգոստոսի 20-ը:

Փոփոխության հիմնավորում: Պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման համար նախատեսվել են ֆինանսական միջոցներ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Գ.Ղազարյանին:

Հեռախոս՝ 060 544 626:

Էլ. փոստ՝ gugks@mail.ru:

Պատվիրատու՝ **ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե**

**Համաձայնագիր-1**
**23.12.13թ. կնքված N ՊԵԿ-ՇՀԱՊՁԲ-13-1-11/21-1 գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին**

**ք. Երևան** «17» փետրվարի 2014թ.

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն այսուհետ՝ «Գնորդ», ի դեմս ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի ղեկավար Ա.Գևորգյանի մի կողմից, և «Մուրան» ՍՊԸ-ն, այսուհետ՝ «Վաճառող», ի դեմս ընկերության տնօրեն Ա.Ծախմուրադյանի մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 23.12.13թ. կնքված N ՊԵԿ-ՇՀԱՊՁԲ-13-1-11/21-1 գնման պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 9.3-րդ կետը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1.Կողմերը որոշեցին Պայմանագրի 9.1 կետին համապատասխան հաստատել ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը՝ համաձայն կից հավելվածի/կցվում է/:
1.2.Պայմանագրի թիվ-1 հավելվածով նախատեսված ապրանքների մատակարարման ժամկետը սահմանել՝ 1-ին խմբաքանակ՝ 15 հատ – մինչև 2014թ. մարտի 25-ը, 2-րդ խմբաքանակ՝ 15 հատ – մինչև 2014թ. ապրիլի 20-ը, 3-րդ խմբաքանակ՝ 15 հատ – մինչև 2014թ. մայիսի 20-ը, 4-րդ խմբաքանակ՝ 15 հատ – մինչև 2014թ. հունիսի 20-ը, 5-րդ խմբաքանակ՝ 15 հատ – մինչև 2014թ. հուլիսի 20-ը, 6-րդ խմբաքանակ՝ 15 հատ – մինչև 2014թ. օգոստոսի 20-ը:
1.3. Սահմանել, որ Գնորդը պայմանագրի թիվ-1 հավելվածով նախատեսված իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն համաձայնագրի հավելվածով սահմանված ժամկետներում, բայց ոչ ուշ քան 2014 թվականի դեկտեմբերի 25-ը:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:
2.2. Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:
2.3. Սույն պայմանագրում կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:
2.4. Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված է հայերեն լեզվով, /երկու/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե | «Մուրան» ՍՊԸ |
| Ք.Երևան, Մ.Խորենացու-3,7 | ք. Երևան, Տիգրանյան 1 փակ. 1 |
| ՀՎՀՀ 02591206 | ՀՎՀՀ 00084235 |
| Հ/Հ 900011054039 | Հ/Հ 2050022156761001 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | «Ինեկոբանկ» ՓԲԸ |
| ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի ղեկավար՝ | «Մուրան» ՍՊԸ-ի տնօրեն՝ |
| Ա.Գևորգյան | Ա.Ծախմուրադյան |

17.02.14թ.

Հավելված
Հաստատված է
«23» դեկտեմբերի 2013թ. կնքված
N ՊԵԿ-ՇՀԱՊՁԲ-13-1-11/21-1
գնման պայմանագրի փոփոխությամբ

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի անվանումը | Բյուջետային ծախսերի տնտ. դասակ. հոդվածը* | Նախատեսվում է ֆինանսավորել 2014թ. ՀՀ պետական բյուջեի միջոցներով նախատեսված հատկացումների հաշվին, ըստ ամիսների՝ բնդ որում | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | **Ընդամենը Տարի** |
| Մարդատար ավտոմեքենա՝ Nissan Micra մակնիշի | 4861 | | 79 500 000 | 159 000 000 | 238 500 000 | 318 000 000 | 397 500 000 | 477 000 000 | 477 000 000 | 477 000 000 | 477 000 000 | 477 000 000 | **477 000 000** |

* Վճարվող գումարները ներկայացված են աճողական կարգով:

**ԳՆՈՐԴ**
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե
Ք.Երևան, Մ.Խորենացու-3,7

ՀՎՀՀ 02591206

Հ/Հ 900011054039

ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի ղեկավար՝

**Ա. Գևորգյան**

**ՎԱՃԱՌՈՂ**
«Մուրան» ՍՊԸ
ք. Երևան, Տիգրանյան 1 փակ. 1

ՀՎՀՀ 00084235

Հ/Հ 2050022156761001

«Ինեկոբանկ» ՓԲԸ

«Մուրան» ՍՊԸ-ի տնօրեն՝

**Ա. Շահնազարյան**

17.02.2014թ.